

զոր ապահարկանէն աւելի օգտակար, զօրեղ և բանաւոր կը տեսնեմ եռ, ընտանեաց դառնաթիւնները թեթևացնելու համար ։ Ահա խնդիր մի, զօր արժան է ուշադրութեան առնուզ և մշակել և հասունացնել, ոչ ըսկ իրաւագիտական հայեցակէտով, այլ և օրինաւոր գործադրութեամբ և եկեղեցական և աշխարհական իշխանութեանց համերաշխ և հաւատարիմ գործակցութեամբ ։ վասն զի ինչպէս ո՞ր և իցէ քրիստոնեայ զոյգ մի, ո՞ր և է ընտանիք մի կրկին հապատակութեամբ իւրից եւրից հանգանակած է իւր ազատութիւնն օրինաց առնկ, ընդհանուր ընկերութեան և եկեղեցւոյ բարեւյն համար, այսպէս ալ ուրեմն այդ կրկին իշխանութիւնները պարտա-

կան են նոյին օրինօք, զուգընթանալ և համերաշխութեամբ հայթհայթել առանձինն ընտանեաց բարին և երջանկութիւնը ։ Ահա այս կետիս մէջ և այս շափով միայն ձեզ կը համաձայնինք ։ Կ'ընդունիք ։

— Էջո. իբրև սկզբունք բարի է, բայց նորա գործադրութիւնն՝ անյուսալի ։

— Եթէ կարելի եղող սկզբան մի գործադրութիւնն անյուսալի է, մենք ալ կը վերջացնենք մեր խօսքն՝ բաելով, որ ձեր պաշտպանած սկզբան գործադրութիւնը բոլորովին յօւսահատական է ։ վասն զի թէ կրօնական և թէ իրաւաբանական հայեցակէտով անկարելի է ։

Շիրակացի

## ՈՒՂԵԿՈՐՈՒԹԻՒՆ ՇԱՏՏՐԻ ՑԱՐԵՒԵԼՈ

(Ժես յ'է? 58)

ԼԸ

Սուդ դադար յերևան. — Պաշ-Գամեի. — Գեղարդ. եկեղեցին, ուխտագնացուրիւն. — Վանքին տեսարանը, տօնք, հացկերոյք, փորորիկ ։

**ՊԱՏԱԿՆԻՍ** էր փութով մեկնիլ գէպ ի կօք-շայ լնի բարձր սարահարթները, անցնելով ընդ գեղ զարդ, զալ ի Նոր-Պայէղիս և անկից երթալ ի Տփղիս և Երևանու նաւաշահիքը մեզ նոր խօսմբ մը տուաւ, բաղկացեալ ի թաթար շափարաց, Արամ Արքահամեանց անուն հայու մը ձեռքին տակ, որ սստիկանութեան պաշտօնեայ էր ։ Նըն ջարեպանք՝ պողոսէ գոն էինք՝ մեզ ընկերեցին դարձեալ, միայն ձիերը փոխուեցան ։ Մեր ճամբրուդրեան այս վերջին մասը որսինետեւ պէտք էր շատապի աւարտել, բեռներուն մեծ մասը զրկեցինք Տփղիսի փրայով ։ Պայց

գժրազդաբար շատ բան թօթափեցինք մեզմէ ։ վասն զի ինչպէս պիտի տեսնենք, անկողնիկները զրկելով, մեզ միայն գորգերը և մեր փրանը պահեցինք, կարծելով որ զացած տեղերնինք լի է այսպիսի կարասեօք ։

19 յուլիս, ու Առաւտեան ժամը ուժին՝ կարաւանը ճամբայ ելաւ գէպ ի Պաշ-Գամենի և Գեղարդ, ուր տարուէ աարի ուխտագնացութիւն կ'ըլլովի, որուն շատ կը փափաքինց ներկայ ըլլալս ։ Գեղեցիկ պարտիզաց երկայնքը բանելով, քաղքէն գուրս կ'ելնենք Քանաքեռի ճամբայ, և կը սկսինք ելնել սարահարթը՝ որ կ'իշեւ քաղաքին վրայ արևելեան կողմէն ։

Դեռ առաւտուեան այս ժամուն՝ շատ մը թաթարներ և հայեր կը քնանան բացօթեայ իրենց պարաիզաց մէջ կանգնուած բարձր վրանաց տակ, կամ երբեմն ծառի մը մէջ՝ նոյն նպատակին յարմարցուած : Ոմանք արթնցած՝ մեզի կը նային՝ աշքերնին շիբւլով՝ իրենց օպային անկողնոց բարձանքէն, որոնց պաղայից ճիւղերու մէջ կը կորսուին : Կան կիներ որք կը զարդարուին, և գոյնզգոյն շրջազգեասոնին կը հագնին . նկարելու արժանի տեսարաններ :

Կարկաչանու ջրերով լի Հայոց Նորք գիւղին զիմացին անցնելով, կ' ելնենք 1490 մեղր բարձր քարածայիք մը սարահարթը . վերջը ոսկ գայ Օրվէժ գիւղը իւր կեղեցիկ պարտէ զներով և ջրերով, որ թէպէտ գեղահոս կ' երեխն, բայց տաք են և ազանցացած վաղելու ասեն : Այս գիւղը Երևանէն նուկէս հզմ. հեռու է . իսկ Պաշ-Գասանին 40ուկէս :

Ճամբան տասակի բազմութիւն կայ : Այդը, կանայիք, տղայք, տօնական զգեստ հապած կ' անցնին անզավար, ոմանք սոսրով, ոմանք ձիով : Բոլոր այս մարդիկ ուխտաւորներ են՝ որք մեզի պէս Գեղարդ կ' երթան՝ որուն տօնն է վաղը . այս տօնը ամենէն նշանաւորն է Հայոց տօներէն, և հոն երթալէն տօաջ եօթն օր պահը կը պահեն :

Ժամբը 44 ին, 1720 մեսր բարձրութեան վրայ փիրուն ժայռերու կը հասնինք, որք կ' իշխեն Օղջաբերդի նկարագեղ գիւղի վրայ, որք կը բնակին 30 ընտանեաց շափթամբք :

Վերէն վար շիտակ քարածայսերու մէջ անթիւ տնձաներ փորսուած են, որք խոստ հին կը թուին : Այս բիւրաւոր որջերու աղղեցութիւնը իխատ տարօրինակ է, և հոն բնակող մարդիկ յիրաւի աղէկ ընսրութիւն ըրած են, վասն զի բնութիւնը շատ գեղեցիկ է, և երկիրները՝ ամէն տեղ լու միշակուած մեծ պաղաքերութիւն կը խոստանան :

Քարբիշալու գիւղի մօտ կարկածուն վտակի մը եղերը կայ սիրուն անկիւն մը, հոն կ' իշխենք, և մեծ ախործով կը լափենք վարզագոյն և անուշանաս սիրուն ձմերակները, որոցմով չամբարձումը լեցուցեր է պարկերը : Հայուհիք կ' անցնին նամքէն հազուած

զարդարուած : Իրենց ճերմակ ճակատը պսակուած է ոսկի դրամոց թագովիր՝ նեղ, լայն՝ ըստ իրենց հարասութեան . առլուրաբար քիչ մը տագոյն կենանացած է քալելէն և տաքութենէն, իրենց մեծ սև զիլու կապերով՝ որք աղէկ ազուցուած են վարդագոյն այսեր նուն վրայ, շատ սիրուն հն փորբիկ աղջիունը :

Նորէն ճամբայ ելնելով, կը հասնինք իսկոյն ի Պաշ-Գասանի, 1500 մեղր բարձանց վրայ, որ նոյնպէս մի է ի հոչակաւոր տեսարանաց Հայոստանի պատմութեան : Այդի զիւղի զեղեցիկ կեռասենեաց խմբին տակ նասելով, կը զովանանք : 130 ընտանեացմէ բաղկացած այս գիւղը, ինչն է, և զպրոց չունի : Շատ մեղր կայ այսուեղ :

Գառնոյ հիմնարկութիւնը երկու հազար տարիէն պակաս չէ Քրիստոսէ առաջ : Իւր հիմնագիրն անուամբ Գեղամ կը կոշուէր նախ, վերջը անոր փարը որուայն անուամբ կոչուեցան Գառնի : Շատ վերջ Տրդատի ձեռամբ գեղեցկացաւ այս նշանաւոր քաղաքը, վասն զի իւր խորովիրուփաստ քրոջ սիրելի բնակարանն էր :

Կը տեսնուին տակաւին հին բերդին պատերուն ճակատաները՝ Գառնի-Հայիք ափանց առնելեան կողմը՝ որ ահաւոր անզունդի մը մէջ կը հսուի : Տկար կողերը պաշտպանուած էին ամուր պատով մը լաւաներու մէջէն փարուած կողերով : Բայց հիմայ անկարելի է նոր բան մը կազմակերպել բերդին տեղայն ներկայացուցած քառուն :

Կանգուն մեծ զուռ մը միայն կայ՝ շինուած քրիստոնէութեան մասնելէն ետքը, գուշակելով խաչերէն՝ որոցմով զարդարուած է : Թողլով զայն, կ' անցնինք շտապաւ գէպ ի անսանի տաճարը՝ օրուն վրայ Մոլոսէս խորենացի գեղեցիկ նկարագրութիւն մը թուած է : Այս շէնքը՝ շինեալ ի Տրդատայ՝ է ըստ պատմչին՝ առուն հովանոց, մահարձանօք, պանչելի զրօնուածովլք բարձր քանակաւ, ի համար քեր իրոյ խոսրովիզատոյ, և գիւեալ ի նմա զիշատակ իւր հելլենացի գրով : Ա

Մի քանի հայեր մեզ կ' առաջնորդեն այս աւերակը, զոր « Գան Տրդատայ » կը կուեն :

Այս քիշ շատ առասպելափառն պատմութեան բոլոր յիշատակները կը պահուին արդի ժողովրդականութեան մէջ : Բայց, աւազ, փոխանակ այս պքանչելի շինուածքին, անհեղեղ կոյս մը միայն կը տեսնեմ նիմոց՝ որք զիգուած են գետնի վրայ ։ Ճանապարհորդ մը՝ Դիմուա՛ որ այցելած է այս աւերակաց յիսուն տարի առաջ, գրեթէ զոտած է անոր զիբը :

Բայտ իրեն՝ այս շէնքը տաճար մը միայն կրնար ըլլալ, իւր շտփերու նուազութեան համար : Կեցած էր վեց սետնց վրայ հին յունական կարգաւ, ամենագեղեցիկ սնող, ինչպէս կը ցուցընեն խոյակաց և խողովակածե փորուած սեանց անթիւ մնացորդք՝ որ այսօր կը ծածկեն նորա տեղը : Գաւթին յատակը նոյնաէս ճոխութեամբ զարդարուած էր : Այս ասճարը անշուշտ նուիրուած էր հայ աստուածութեան մը՝ Արտեմեայ կամ Անահուայ :

Քանի մը մետր հեռու անկից՝ կայ ուղղաձիգ մայս մը, որու ստորոտէն կը հոսի Գտանի-շայը : Մեր առաջնորդները կը ցուցընեն ինձ սանդղոյ մը հետքերը՝ տաճարէն զէպ ի գետակը : Չեմ կրնար ստուգել, վասնզի զուխիս կը զառնայ երը կը փորձեմ նայիլ անդունդը . բայց կարձեմ թէ այս ոսնդուզը բնակաց երեակայութեան մէջ միայն գոյսութիւն ունեցած է : Այս կէտէն գեղեցիկ տեսարան մը կը զայելնեք գտանի-շայի նովտի վրայ, որու փրփրու հօսանքը կը թաւալի արծաթեայ ժապալինի նման՝ իր անձուկ որմնոց մէջ :

Հանգէպ ժայխոս յայնկոյս գետոյն, ընդարձակ անձաւ մը կ' երեխ, որ՝ ըստ առասպելաց՝ կը բնակէր Տրդատայ քոյրը : Գտանոյ բոլոր այս նավիտը հրարդակային ծագմանէ է . աւերակք իսկ կը բարձրածան լաւայի հոսանաց վրայ :

Թողովզ այս գիւղը՝ առուակի մը մինչեակը կ' ենենք : Առաս է և համեղ, և է մի յաղբերաց որ զերւան կը սնաւցանեն . 7 աստիճանի է ժայռէն եղած տեսն, և առ մի վայրիկեան 5-6 հարիւրաչիտր ջուր կու տայ : Դժբաղդաբար այսպիսի հարստութիւն մը տեղույ մը մէջ ուր ջուրը հազուազիտ է և գէշ,

զգուշութեամբ չի պահուիր : Կը հոսի բաց երկանից տակ, ժողվելով անցնելու տաեն զիւզերս մացորդները, և երբ յերկան կը հասնի, կորուսած է իւր զովութիւնն ու մաքրութիւնը : Իմէ՛ կարենային ջրանցներ բառնուալ այս և ասոր նման ուրիշ ոչ ինչ ընդհատ յատակ և առաս աղբերաց, Երեւան աշխարհին լաւագոյն չուր ունեցող քաղաքներէն մին կ' ըլլար :

Պաշ-Գառնոյ ի Գեղարդէ հեռաւարութիւնը 8 վերսու է, բայց ճամբան խիստ վատ . կ' անցնի լաւայից մէջէն և սեպածն զառիվայրի մը վրայէն :

Որչափ որ Գառնի-շայի աղբերականց կը մօտենանք՝ հավիտը նոյնշափ կը փարբկանայ, և աեսարանը գեղեցիկ և վայրենի փիրը մը կ' առնու : Հովտին կողերը՝ հրաբրդային հոդաբարով և լաւայից հօսանքը կազմուած ըլլալով, պածայր ցցուած կոթողներու և փորուած բիրաւոր արձաններու զաղափարը կու տան : Այս մայսերու վէին մէջ՝ որ ամզէն աւելի անսովոր զոյներ կը ներթայացնեն, կարմիր, գեղին, մթազոյն, գորշագոյն, և որք կրացեալ կը թուին, այծերու անթիւ հօտեր կը վիստան բաւսաբերութեան զալով՝ հազիւ թէ կը անսուուի : Հավտին յատակը տնհուն ջարդախանաց տեսիկ կ' ընծայէ : Դեռ եկեղեցին չերկիր, բայց շատ հեռու պէտք չէ ըլլայ, վասն զի ճամբան կը լեցուի երթարով ուսկտաւորօք :

Ամբողջ ընտանիքներ կը հասնին եղներէ զանգաղութեամբ քաշուած հին կարերով, Ամենքն ալ ունին հետերնին զառներ, որոց ողբական մայելը օղը կը թնդացընէ : Կարելի էր կարծել ինքինքնիս շատ մը զարեր յետս . այնչափ մեծ են փափկութիւնն և պարզութիւն բարուց որ զմեղ կը պատեն : Հեշտանոց կը խառնուինք այս երիներանդ ամբոխին, որ մեծ աղաղակալ կը յայտնէ իւր ուրախութիւնը՝ նպատակին հասնելուն համար :

Եւ ահա, իսկոյն կ' երեխ նշանաւոր եկեղեցին անկիւն մը, որոյ աեսարանը զարմացման և հիացման աղաղակ մը կը խէլ մեղմէ : կպած է ժայռին՝ զետեղուած նեղ տեղույ մը մէջ, որ ի բնութենէ պատրաստուած է, և կախուած անդունպին վրայ : Զար-

մանքս ապշութեան փոխուեցաւ, երբ մոնեն լոլ եկեղեցւյ գաւիթը՝ զայն դրաւուած կը գտնենց չերմուաներով, որք մինչև առնիշներու վերայ ալ լցուած են: Խոզ աղմուկ մը կը տիրէ այս փեթակին մէջ, յօրում կը ճանցուին Հայք, Քուրոյք, Ասորիք և Զինկանք: Զուսնայի, Յաղարայի, Թժմրկի, և սրնզի ձայներ կը լուսին յամենաւուա, և մինչ մի քանի կանայք շրջազգեսանին ժողված կրակ կը վառեն, անդին երխասարդք Լեզգինկա կը պարեն նոյն իսկ եկեղեցւոյն տանեաց վրայ:

Կը խոսուալանիմ որ այս աեսարանին զիմաց՝ աշքերո կը շփէի, աեսնելու համար թէ արգեօք երազի մէջ էի: Բայց հազի թէ բակը մոտած էինք, ասստիկ փոթորիկ մը սկըսաւ, և գեռ մեր կաները հնաստծ՝ ասրափելի անձրս մի միսաւ գուլ: Հաստատուելու աեղ մը զգտնելով, դացինք մինչև աստիկանութեան պաշտօնէին՝ որոյ է յանձնուած հսկել բարեկարգութեան՝ տօնի միջոց: Այս պաշտօնեայն ընտրած էր իրեն բնակութիւնը եկեղեցւոյն կալուածոց ողորմելի սենեկի մը մէջ: Մեզ ալ տուաւ ախոսի մը տանիքը, որ մինչև նոյն ատեն պարապ մնացեր էր՝ անհաստատ ըլլալուն համար: Այս երերան տեղը հաստատուեցաւ վրաննիս:

Անձրեին մատիկ չընելով, ճաշի պատրաստութիւնը կ'ըլլան, հարիւրաւը գտներ կը մորթուին, և բակը խսկոյն կը ծածկուի արեամբ: Մեր վրանը հազի կանգնուած՝ աղտեղը հաստատուեցաւ վրաննիս:

Կանայք՝ խենթեցած այս տեղաստարափէն, կը հանեն իրենց զեղեցիկ կապայս, կանաչ, զեղին, կարմիր շրջազգեստները, և իրենց վրայ փաթթելով, կը պաշտին, կարմիր տարատներով որք և մինչև ոտքերնին կը հասնին, շատ նեղ ու տղեղ են:

Երբ այս զրօսանաց և աղմկալից պատրաստութեանց մէջ՝ վաս կամ լրա կը նստինք տեղերնիս, ահաւոր որոտում մը կը լուսի յանկարծակի հովտին խորը, Գառնիշ-Հայն է. գրեթէ մի քանի վայրկեան յառաջ չոր, փոխուած է հեղեղասատ յօրձանաց՝ ջրհեղեղային անձրսին լազբեցութեալք: Գետին շոնիզը՝ տօնին աղմուկին հետ միացած, զիս բոլորովին կը խլացընեն:

Բայց մի քանի վայրկենի մէջ ինչպիսի շփոթութիւն դիմուն վլուն վլուն ատակ հաւաքուած ամրոխին մէջ: Որպիսի լքուն կը կարգացուի քաջ մարզկանց ճակտին վրայ՝ որք եկած են հնուուներէն իրենց չերմեռան դութիւնն ընելու և քիչ մ' ալ զուարձանաց համար: Անձուկ և վայրենի հովտը՝ որս կ'ըլլայ տարերաց կատաղութեան: գեղին հեղեղը կը խոյնայ գդորդմամբ ի յատակը. փայլատակունք կը պատռեն միջին ամպերը, երկինք կ'որոտան. տօնական պատրաստութիւնը կը թողուին ի խեզն ուխտաւորաց՝ որք կը զիմեն յեկեղեցին: այս ամենը կը կազմեն աեսարան մը խխոտ անսովոր և դժուարին ի բացատրել:

(Շարայարելի)

